ՀՀ կենտրոնական բանկ

Տեղեկատվական նյութ

«ՀՀ վճարահաշվարկային համակարգը 2008թ. ընթացքում»

Վճարային համակարգերի և դրամաշրջանառության կարգավորման վարչություն
Վճարահաշվարկային համակարգի զարգացման բաժին
2009թ.

Բովանդակությունը

Նախաբան 1
1. ՀՀ վճարահաշվարկային համակարգում դիտարկված միտումները 2008թ ընթացքում 1
2. ՀՀ բանկային համակարգում սպասարկվող հաճախորդները և նրանց հաշիվները [2] 2
3. Վճարային հոսքեր 3
4. Վճարումներ ՀՀ կենտրոնական բանկին պատկանող վճարային համակարգերով 4
4.1 Էլեկտրոնային վճարումների համակարգ 6
4.2 Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգ 10
4.3 Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ 10
5. Վճարային գործիքներ 11
6. Վճարային քարտեր 13
7. Միջազգային դրամական փոխանցումների համակարգեր 19
8. Ինքնասպասարկման տերմինալներով մատուցվող ծառայություններ 22
9. Նոր բանկային տեխնոլոգիաներ 23
10. Նշումներ 24

Նախաբան

«ՀՀ վճարահաշվարկային համակարգը 2008թ ընթացքում» տեղեկատվական նյութի նպատակն է բնութագրել հաշվետու տարվա ընթացքում ՀՀ վճարահաշվարկային բնագավառի հիմնական ցուցանիշները և իրադրությունը, հանրությանը տեղեկացնել ֆինանսական միջնորդների կողմից մատոցվող վճարահաշվարկային ծառայությունների, ինչպես նաև ՀՀ տարածքում գործող վճարային համակարգերի գործունեության վերաբերյալ: Նյութը մշակվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ ֆինանսական միջնորդներից (ՀՀ տարածքում գործող բանկերից, վարկային և վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպություններից) ստացված հաշվետվությունների հիման վրա, ինչպես նաև ընդգրկվել են ՀՀ կենտրոնական բանկին պատկանող վճարային համակարգերի գործունեությունը բնութագրող տվյալները:

Սույն նյութում ներկայացված են 2008թ ընթացքում ՀՀ վճարահաշվարկային համակարգի գործունեության վերաբերյալ մի շարք վիճակագրական և տեղեկատվական տվյալներ, համառոտ բնութագրված է վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը՝ բանկերի, գանձապետարանի, պրոցեսինգային ընկերության, ինչպես նաև դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպության: Առանձին ներկայացված են նաև հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ՀՀ-ում կիրառվող վճարային գործիքների և վճարային համակարգերի գործունեությունը մանրամասն բնութագրող վիճակագական տվյալներ, ինչպես նաև ներկայացված է տեղեկատվություն ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերի, առևտրային բանկերում սպասարկվող հաճախորդների, մատուցվող ծառայությունների, միջազգային դրամական փոխանցումների, քարտային բնագավառի վերաբերյալ:

1. ՀՀ վճարահաշվարկային համակարգում դիտարկված միտումները 2008թ ընթացքում

2008թ ընթացքում ՀՀ-ում անկանխիկ գործառնությունների ծավալը կազմել է 15136 մլրդ. ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ անկանխիկ գործառնությունների ծավալը աճել է մոտ 1.6-անգամ, իսկ քանակը աճել է մոտ 1.4-անգամ: Շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամը նվազել է 0.03-անգամ՝ կազմելով 316 մլրդ ՀՀ դրամ: Իսկ ՀՆԱ-ը 2007թ. համեմատ ավելացել է 1.16-անգամ և կազմել 3650 մլրդ ՀՀ դրամ:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի օրենսդրական ակտերի՝ կենտրոնական բանկի կողմից ՀՀ տարածքում գործող մի շարք առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպություններին տրամադրվել են տարբեր միջազգային վճարային համակարգերին անդամակցելու թույլտվություններ՝ այդ թվում առևտրային բանկերին -12 թույլտվություն, իսկ վճարահաշվարկային


կազմակերպություններին - 15 թույլտվություն: Միաժամանակ լիցենզավորվել են- 4 վճարահաշվարկային կազմակերպություններ: Այդ թվում ««ԳլորՓեյմենթս» ՍՊԸ որպես դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություն և 3 կազմակերպություններ («ՕՍՄՊ» ՍՊԸ, «ԷՄ-ՋԻ-ՓԵՅ ՍԻՍՏԵՄ» ՓԲԸ, «ԿՎԱԴՐԱԿՈՄ» ՍՊԸ) ստացել են վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և միաժամանակ դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիաներ:

2. ՀՀ բանկային համակարգում սպասարկվող հաճախորդները և նրանց հաշիվները [2]

2008թ ընթացքում դրական փոփոխություններ են գրանցվել ՀՀ բանկային համակարգ նոր հաճախորդների ներգրավման առումով՝ ՀՀ առևտրային բանկերում սպասարկվող և բանկային համակարգի կողմից առաջարկվող տարբեր ծառայություններից օգտվող ակտիվ հաճախորդների ընդհանուր քանակը կազմել է 1015052, իսկ վերջիններիս հաշիվների քանակը՝ 1384686: Որպես ակտիվ հաճախորդ դիտարկվում են այն հաճախորդները, որոնք հաշվետու ժամանակահատվածից սկսած վերջին մեկ տարվա ընթացքում իրենց հաշիվներով իրականացրել են որևէ գործառնություն: 2007թ. համեմատ հաճախորդների քանակը ավելացել է 8.7%-ով (81182 հաճախորդ, այդ թվում նաև վարկառու հաճախորդները). միաժամանակ հաճախորդների ընթացիկ և ժամկետային հաշիվների քանակը ավելացել է համապատասխանաբար 1.6%-ով և 13.6%-ով (որտեղ ընթացիկ հաշիվները ավելացել են 17362-ով, իսկ ժամկետային հաշիվները ավելացել են 7291-ով): Ընդ որում 2007թ համեմատ բանկային համակարգում սպասարկվող իրավաբանական անձ հաճախորդների հաշիվների քանակը աճել է 18.3%-ով (12957-ով), իսկ ֆիզիկական անձ հաճախորդների հաշիվների քանակը աճել է 1.13%-ով (11696-ով): Վարկային հաշիվների քանակը 2008թ վերջի դրությամբ կազմել է 255633, (իրավաբանական անձանց վարկային հաշիվներ՝ 21146, իսկ ֆիզիկական անձանց վարկային հաշիվներ՝ 234487) /աղյուսակ 2/:

2008թ ընթացքում ռեզիդենտների ցպահանջ ավանդային միջոցները 2007թ. համեմատ նվազել են մոտ 11.9% -ով (որը կազմում է 22787 մլն. ՀՀ դրամ), իսկ ժամկետային միջոցները աճել են 28.4% -ով (որը կազմում է 48504 մլն. ՀՀ դրամ):

գրաֆիկ 1



3. Վճարային հոսքեր


2008թ ընթացքում ներբանկային վճարումների ծավալը կազմել է 2267 մլրդ. ՀՀ դրամ (քանակը կազմել է 2186846), իսկ միջին օրեկան դրամական փոխանցումների քանակը ներբանկային վճարումներում կազմել է մոտ 8542 փոխանցում, որտեղ մեկ փոխանցման միջին գումարը կազմել է մոտ 1037 հազ. ՀՀ դրամ: 2007թ. համեմատ ներբանկային վճարումների ծավալը աճել է 433 մլրդ. ՀՀ դրամով: Ներբանկային վճարումները բնութագրում են տնտեսվարող սուբյեկտների ակտիվությունը, որոնք սպասարկվում են միևնույն բանկային հաստատության կողմից, ինչպես նաև վերջիններիս կենտրոնացումը մեկ կառույցի ներքո:

Հաշվետու ժամանակաշրջանում առևտրային բանկերի միջև լորո/նոստրո թղթակցային հաշիվներով իրականացված միջբանկային վճարումներում (չօգտագործելով կենտրոնական բանկում բացված թղթակցային հաշիվները) 2007թ. համեմատ՝ վճարումների ընդհանուր ծավալը աճել է 59 մլրդ. ՀՀ դրամով և կազմել է 68 մլրդ. ՀՀ դրամ: Նշված միջբանկային վճարումներում միջին օրեկան դրամական փոխանցումների քանակը կազմել է 29 փոխանցում, իսկ մեկ փոխանցման միջին գումարը կազմել է մոտ 9.4 մլն. ՀՀ դրամ:

Կենտրոնական բանկի միջոցով իրականացվող վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) միջին օրեկան դրամական փոխանցումների քանակը կազմել է մոտ 8595 փոխանցում, որտեղ մեկ փոխանցման միջին գումարը կազմել է 4.13 մլն ՀՀ դրամ: 2008թ ընթացքում Կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված մեկ փոխանցման միջին գումարը 2007թ. համեմատ նվազել է մոտ 0.17 անգամ, իսկ միջին օրեկան փոխանցումների քանակը աճել է 1.58-անգամ /աղյուսակ 4/:

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնական բանկի համակարգերով առևտրային բանկերի միջև իրականացված փոխադարձ վճարումների ծավալը 2007թ. համեմատ աճել է մոտ 1.5-անգամ և կազմել 2061 մլրդ. ՀՀ դրամ, քանակը աճել է 1.4-անգամ և կազմել 960330:

գրաֆիկ 2



4. Վճարումներ ՀՀ կենտրոնական բանկին պատկանող վճարային համակարգերով


2008թ ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումները 2007թ. համեմատ աճել են՝ ծավալային մասով 30%-ով՝ (2120 մլրդ. ՀՀ դրամով), իսկ քանակային մասով աճել են 58%-ով, որը համարժեք է՝ 806878:

Դիտարկված վճարումների ընդհանուր միտումները նշված ժամանակահատվածի համեմատ՝ ըստ համակարգերի տարանջատվում է.

- էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումները (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) ծավալային մասով աճել են 24%-ով՝ (քանակային մասով աճել են 56.9):

- Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումները ծավալային մասում աճել են 6.5-անգամ, (քանակային մասում 1.7-անգամ):
- թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգերով իրականացված վճարումների ծավալը աճել է 1.6-անգամ, իսկ քանակը աճել է 2-անգամ /աղյուսակ 3/:

գրաֆիկ 3



2008թ ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով ՀՀ պետական բյուջե և ՀՀ պետական բյուջեից կատարված դրամական փոխանցումները կազմել են այդ համակարգերով իրականացված ընդհանուր վճարումների (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) ծավալի մոտ 38.88%-ը, քանակի 50.73%-ը: 2007թ համեմատ Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը ավելացել է 8.4%-ով (275 մլրդ դրամով), իսկ քանակը՝ ավելացել է 73.78%-ով (473858-ով): (աղյուսակ 6):

ՀՀ կենտրոնական բանկը հանդիսանալով որպես վերջնահաշվարկ իրականացնող բանկ՝ մի շարք այլ վճարային համակարգերի համար ապահովում է այդ համակարգերով իրականացված գործառնությունների վերջնահաշվարկի կատարումը: Մասնավորապես՝ «ԱրԱ» միասնական վճարային համակարգում քարտերով իրականացված գործառնությունների դիմաց, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ-Արմենիա» ֆոնդային բորսայի առևտրային հարթակներում իրականացված գործառնությունների դիմաց:

4.1 Էլեկտրոնային վճարումների համակարգ

2008թ վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի Էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 262, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ իր 44 բաժանմունքներով, 22 առևտրային բանկեր՝ իրենց 189 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք.Մոսկվա), «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ-Արմենիա» ֆոնդային բորսան և մեկ ոչ բանկ դիլեր:

2008թ ընթացքում Էլեկտրոնային վճարումների համակարգով Հայաստանի Հանրապետության մարզերում և Արցախում գործող մասնակիցների, ինչպես նաև Միջպետական բանկի միջև փոխանցումների ծավալային և քանակային մասում գերակշռում են Երևան քաղաքում գործող մասնակիցների կողմից իրականացված փոխանցումները՝ 4674 մլրդ. ՀՀ դրամ ծավալով 1782659 փոխանցում (առանց բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումների): 2007թ. համեմատ այս փոխանցումների ծավալը աճել է 23.8%-ով, իսկ քանակը աճել է 51.2%-ով:

Արցախում գործող մասնակիցների կողմից նախաձեռնվել է 80 մլրդ. ՀՀ դրամ ծավալով փոխանցում (քանակը՝ 3123), որը նախորդ տարվա ույն ժամանակահատվածի համեմատ աճել է 52.5%-ով, իսկ քանակը աճել է 28.1%-ով: Շիրակի և Լոռվա մարզերում գործող առևտրային բանկերի միջոցով իրականացվել է համապատասխանաբար՝ 14.7 մլրդ. ՀՀ դրամ և 10.5 մլրդ. ՀՀ դրամ ծավալով փոխանցում (վերջիններիս քանակը կազմել է 64921 և 56110): 2007թ. համեմատ Շիրակի մարզում գործող առևտրային բանկերի կողմից իրականացված վճարումների ծավալը աճել է մոտ 15.9%-ով, (քանակը աճել է 51.4%-ով), իսկ Լոռվա մարզի հետ կապված վճարումների ծավալը աճել է մոտ 77.2%-ով, (քանակը աճել է 121%-ով), (աղյուսակ 8):

Հաշվետու ժամանակահատվածում էլեկտրոնային վճարումների համակարգով միջին օրեկան կտրվածքով իրականացվել է մոտ 8222 փոխանցում, որի ընդհանուր ծավալը կազմել է 18984 մլն. ՀՀ դրամ: Նշված ծավալը 2007թ. ցուցանիշների համեմատ աճել է 24.%-ով (3686 մլն. ՀՀ դրամով):

Բորսայական գործառնությունների իրականացման նպատակով միջին օրեկան կտրվածքով իրականացված փոխանցումները կազմել են 46408 մլն. ՀՀ դրամ (քանակը՝ 54 փոխանցում), որը ավելացել է մոտ 6.5 -անգամ:


Ըստ մեկ վճարման ծավալային կտրվածքի մինչև 100 հազ. ՀՀ դրամ ծավալով փոխանցումները 2008թ ընթացքում ընդհանուր ծավալում կազմել են 30421 մլն. ՀՀ դրամ, որը 2007թ համեմատ ավելացել է 47.6% (9807 մլն. ՀՀ դրամով): Էլեկտրոնային վճարումների ընդհանուր քանակում մինչև 100 հազ. ՀՀ դրամ ծավալով փոխանցումները կազմում են ընդհանուր վճարումների քանակի 62.8% (1518462), որը ավելացել է 77.7%-ով (576545-ով). առանց բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումների:

2008թ ընթացքում Էլեկտրոնային վճարումների համակարգում վճարումների ծավալի 64.3%-ը (3124 մլրդ. ՀՀ դրամ) և քանակի 87.9%-ը (1850251 փոխանցում) իրականացվել են վճարման անհատական հանձնարարականներով (ՀՏ100, ՀՏ120), առանց բորսայական

գործառնությունների հետ կապված փոխանցումների: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անհատական հանձնարարականներով վճարումների ծավալը աճել է՝ 23.7%-ով (598 մլրդ. ՀՀ դրամով), իսկ քանակը՝ աճել է 58.9%-ով (686249-ով): Էլեկտրոնային եղանակով վճարումների մնացած մասը (1735 մլրդ. ՀՀ դրամի 254641-փոխանցում) իրականացվել է խմբային վճարման հանձնարարականներով (ՀՏ123, ՀՏ131, ՀՏ132, ՀՏ202, ՀՏ203, ՀՏ 231), ընդ որում հիմնական մասնաբաժինը կազմում են միջբանկային վճարման հանձնարարականով (ՀՏ202) կատարված փոխանցումները՝ (ծավալում՝ 31.52%, քանակում՝ 9.19%): 2007թ. համեմատ խմբային վճարման հանձնարարականներով էլեկտրոնային վճարումները ծավալային կառուցվածքում ավելացել են՝ մոտ 255 մլրդ. ՀՀ դրամով: Նշված ժամանակահատվածներում միջբանկային վճարման հանձնարարականով (ՀՏ202) փոխանցումների ծավալը ավելացել է 221 մլրդ. ՀՀ դրամով (քանակը ավելացել է 25143-ով): Իսկ արտարժութային փոխանցումների հանձնարարականով (ՀՏ203) հաշվետու ժամանակահատվածում կատարել է 60 մլրդ ՀՀ դրամի 571 փոխանցում (աղյուսակ 5):


2008թ ընթացքում Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված փոխանցումների կատարման ժամային գրաֆիկում՝ (գրաֆիկներ 4, 5) վճարումների քանակային հոսքերի պիկը տեղի է ունեցել 15.00-17.00 ընկած ժամանակահատվածում 38.07%, առանց բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումների: 2007թ. համեմատ 15.00-17.00 ընկած ժամանակահատվածում իրականացված վճարումների քանակի հոսքը աճել է 59.9%, և կազմել 799461 փոխանցում:

Ծավալային կտրվածքով 2008թ ընթացքում վճարումների առավելագույն ծավալը նույնպես կատարվել է 15.00-17.00 ընկած ժամանակահատվածում: Այդ ընթացքում նախաձեռնվել է էլեկտրոնային վճարումների ծավալի 43.80%-ը: 2007թ. համեմատ 15.00-17.00 ընկած ժամանակահատվածում իրականացված վճարումների ծավալը աճել է 22.8% և կազմել 2112 մլրդ. ՀՀ դրամ:




2008թ ընթացքում 09.00-10.00 ընկած ժամանակահատվածում դիտարկվող վճարումների ծավալը հիմնականում պայմանավորված է բորսայական գործառնությունների իրականացման նպատակով կատարվող փոխանցումներով:

գրաֆիկ 4




գրաֆիկ 5




Ինչպես նախորդ ժամանակահատվածներում, այնպես էլ 2008թ IV-րդ եռամսյակի ընթացում՝ Էլեկտրոնային վճարումների համակարգով ըստ յուրաքանչյուր ամսվա օրերի իրականացված փոխանցումների դիտարկումներում, վճարումների ծավալի

աճը շարունակում է նկատվել յուրաքանչյուր ամսվա վերջին մեկ շաբաթվա ընթացքում՝ հատկապես վերջին օրերին (գրաֆիկ 11, 12):

գրաֆիկ 11



գրաֆիկ 12



2008թ ընթացքում Էլեկտրոնային վճարումների համակարգում տեղ գտած մերժումները կազմել են նախաձեռնված վճարումների քանակի 0.03%-ը և ծավալի 0.15%-ը (664 փոխանցում՝ 24.8 մլրդ դրամ ծավալով): Ընդ որում, իրացվելիության չբավարարման պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում նախաձեռնված վճարումների քանակի 0.02%-ը և ծավալի 0.12%-ը (464 փոխանցում՝ 19.8 մլրդ դրամ ծավալով): Մերժումների մնացած մասը (200 փոխանցում՝ 5 մլրդ. ՀՀ դրամ ծավալով) պայմանավորված է հաղորդագրությունների մեջ ոչ ճիշտ տվյալների արտացոլման (հաղորդագրությունների սխալ օգտագործում, սխալ հաշվեհամար, գումարի կամ արժույթի սխալ նշում) հետ /աղյուսակ 7/:

4.2 Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգ

2008թ ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացվել է 3517 մլրդ. ՀՀ դրամի 89547 վճարում: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված ընդհանուր վճարումներում նշված փոխանցումների ծավալի տեսակարար կշիռը կազմել է 38.71%, իսկ վճարումների քանակի տեսակարար կշիռը 4.07%: Թղթային եղանակով վճարումների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1328 մլրդ. ՀՀ դրամով: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով վճարումները հիմնականում պայմանավորված է ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի կողմից միջբանկային շուկայում իրականացված գործառնությունների ակտիվությամբ:

2008թ ընթացքում, ՀՀ կենտրոնական բանկի թղթային եղանակով հաշվարկների համակարգով առևտրային բանկերի միջև իրականացվել է 79 միջբանկային վճարում 46 մլրդ. ՀՀ դրամ ծավալով: Առևտրային բանկերի թղթային եղանակով իրականացված միջբանկային վճարումները 2007թ. համեմատ ծավալում ավելացել են 10.3 մլրդ ՀՀ դրամով: Իսկ առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացված մեկ վճարման միջին մեծությունը կազմել է 582 մլն. ՀՀ դրամ:

4.3 Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

2008թ վերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 22 բանկեր (5 գործակալ և 17 դիլեր բանկեր), Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ-Արմենիա» ֆոնդային բորսան, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների նախարարությունը (թողարկող՝ պետական արժեթղթերի համար), Գանձապետական պահառուն և ՀՀ կենտրոնական բանկը (Կենտրոնական պահառու և որպես թողարկող՝ ԿԲ արժեթղթերի համար):

Հաշվետու ժամանակահատվածում համակարգի միջոցով պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբախշման և մարման դիմաց կատարվել է 109.6 մլրդ. ՀՀ դրամ ծավալով փոխանցում, իսկ ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերի տեղաբաշխման և մարման դիմաց կատարվել է 140.7 մլրդ. ՀՀ դրամ ծավալի փոխանցում:

Պետական (գանձապետական) արժեթղթերի մարման դիմաց գանձապետարանի կողմից վճարված ընդհանուր գումարը կազմել է 45124մլն. ՀՀ դրամ, իսկ արժեթղթերի առաջնային տեղաբախշման դիմաց բանկերի կողմից կատարվել է 65510 մլն. ՀՀ դրամի փոխանցում: Համակարգի միջոցով Պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման դիմաց վճարումների ընդհանուր ծավալը 2007թ. համեմատ աճել է 7.6 մլրդ ՀՀ դրամով (7.5%-ով), այդ թվում արժեթղթերի տեղաբաշխման հետ կատարված վճարումները ավելացել է 11.9 մլրդ դրամով, իսկ մարման հետ կատարված վճարումները նվազել են 4.2 մլրդ դրամով): Գանձապետական պահառու համակարգի կողմից Պետական (գանձապետական) արժեթղթերի տեղաբաշխման և մարման դիմաց վճարումների ընդհանուր ծավալը կազմել է 1820 մլն. ՀՀ դրամ, այդ թվում արժեթղթերի մարման և տեղաբախշման դիմաց վճարումները կազմել են համապատասխանաբար 755 և 1065 մլն. ՀՀ դրամ:


Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբախշման ժամանակ առևտրային բանկերի կողմից ձեռք բերված կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի դիմաց առևտրային բանկերի կողմից կատարվել է 52670 մլն. ՀՀ դրամի փոխանցում, իսկ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման դիմաց կատարվել է 88114 մլն. ՀՀ դրամի փոխանցում: Համակարգի միջոցով ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման դիմաց վճարումների ընդհանուր ծավալը 2007թ. համեմատ նվազել է 46%-ով (121 մլրդ ՀՀ դրամով):

5. Վճարային գործիքներ

2008թ ընթացքում ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով իրականացվել է 15136 մլրդ. ՀՀ դրամի՝ 5043571 հատ վճարում: 2007թ. համեմատությամբ վճարումների ծավալը աճել է 63.4%-ով (5873 մլրդ. ՀՀ դրամով), իսկ քանակը աճել է 40.8%-ով (1460348-ով): /աղյուսակներ 9, 10/:

ՀՀ տարածքում անկանխիկ վճարումները շարունակվել են իրականացվել հիմնականում կրեդիտային վճարային գործիքներով (ծավալի 99.72%-ը և քանակի 87.06%-ը), այդ թվում՝ վճարային գործիքների ծավալի 67.98%-ը և քանակի 58.94%-ը կազմել են էլեկտրոնային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականները: Անկանխիկ վճարումներում դեբետային գործիքներով կատարված վճարումների ծավալը կազմել է ընդհանուր վճարումների 0.28%, իսկ քանակը կազմել է 12.94% :

գրաֆիկ 6 (2)



2008թ ընթացքում ՀՀ բանկերի կողմից չեկերի (ՀՀ բանկերի և գանձապետական չեկեր) սպասարկման ծավալը կազմել է 7914 մլն. ՀՀ դրամ, իսկ այս չեկերով կատարված մեկ վճարման միջին գումարը կազմել է 1.5 մլն. ՀՀ դրամ /աղյուսակ 11/:

2008թ ընթացքում օտարերկրյա չեկերի սպասարկման ծավալը 2007թ. համեմատ նվազել է՝ 23%, (227 մլն. ՀՀ դրամով) և կազմել 743 մլն. ՀՀ դրամ, իսկ օտարերկրյա չեկերի սպասարկման քանակը նվազել է՝ 36% և կազմել 840:

Ճանապարհային չեկերի սպասարկումը հաշվետու ժամանակահատվածում՝ 2007թ. համեմատ նվազել է 7.5% (128 մլն. ՀՀ դրամով) և կազմել 157 մլն. ՀՀ դրամ, իսկ սպասարկված չեկերի քանակը կազմել է 14700, որը նվազել է 23%:

2007թ. համեմատությամբ մեկ օտարերկրյա բանկային չեկի սպասարկման ծավալը ավելացել է 149 հազ. ՀՀ դրամով և կազմել 885 հազ. ՀՀ դրամ, իսկ մեկ ճանապարհային չեկի սպասարկման ծավալը ավելացել է 18 հազ.-ով և կազմել 107 հազ. ՀՀ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում առևտրային բանկերի կողմից տրամադրված ճանապարհային չեկերի քանակը նվազել է 2.8% և կազմել 9811: Նախորդ տարվա համեմատ օտարերկրյա բանկային չեկերի քանակը նվազել է 63.6% և կազմել 926: Վերջինիս պատճառ կարող է

հանդիսանալ նաև համաշխարային տնտեսական ճգնաժամը, որի արդյունքում օտարերկրյա բանկերի չեկեր (երբ չեկի դիմաց վճարման համար պարտավորությունը դրվում է բանկի վրա) չեն տրամադրվել: Մյուս կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձիք արտասահման մեկնելիս նախընտրել են օգտվել վճարային քարտերով առաջարկվող ծառայություններից:

6. Վճարային քարտեր

2008թ վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերի կողմից իրականացվում է վճարային քարտերի թողարկում և սպասարկում: Այդ թվում 19 առևտրային բանկեր թողարկում և սպասարկում են «Արքա» միասնական վճարային համակարգի քարտեր: Եվս մեկ առևտրային բանկի կողմից աշխատանքներ են տարվում «Արքա» վճարային համակարգերի քարտերի թողարկում և սպասարկում իրականացնելու նպատակով:

Քարտերի սպասարկման կետերի քանակը ընդլայնելու նպատակով 2008թ ընթացքում շահագործվել են 200 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և նշված ժամանակահատվածի վերջի դրությամբ գործող ավտոմատ գանձման մեքենաների քանակը կազմել է 538: Այդ թվում 468 ավտոմատ գանձման մեքենաներ սպասարկում են «ԱրՔա» քարտեր (աղյուսակներ.12, 13.5 և 14):

Քարտերի սպասարկման նպատակով տեղադրված ՊՈՍ տերմինալների քանակը 2007թ վերջի համեմատ ավելացել է 252 POS տերմինալով և կազմել է՝ 2280, այդ թվում 410-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում. իմպրինտերների քանակը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմել է 19: Ընդհանուր առմամբ վճարային քարտեր սպասարկող սարքավորումների քանակը (ԱԳՄ, ՊՈՍ-տերմինալ, իմպրինտեր) կազմել է 2837:

Քարտեր սպասարկող սարքավորումները (ԱԳՄ, ՊՈՍ-տերմինալ, իմպրինտեր) տեղադրված են 2361 սպասարկման կետերում: Ընդ որում քարտերի սպասարկումն իրականացվում է 399 բանկային հաստատություններում (բանկի գլխամաս/մասնաճյուղ), 1883 առևտրի ինչպես նաև սպասարկման այլ կետերում, իսկ հյուրանոցներում քարտերը սպասարկվում են 79 սպասարկման կետերի միջոցով (աղյուսակ.12):

2008թ վերջի դրությամբ՝ նախորդ տարվա վերջի համեմատ 38.6% (126505 քարտով) աճել է ՀՀ բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) վճարային քարտերի քանակը՝ կազմելով 454357: 2008թ ընթացքում «ԱրՔա» վճարային քարտերի քանակը ավելացել է 40.5% (57708 քարտով) և կազմել 200190, իսկ տրամադրված միջազգային քարտերի քանակը աճել է 37.1% (68797 քարտով): 2007թ. վերջի համեմատ «Visa» միջազգային քարտերի քանակը ավելացել է 19.1% (26614 քարտով) և կազմել է 165894, իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը ավելացել է մոտ 102% (24104 քարտով) կազմելով 47769: Միջազգային քարտերի մնացած մասը կազմում են HSBC debit բանկոմատային քարտերը:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) քարտերի քանակի կառուցվածքում «ԱրՔա» քարտերի տեսակարար կշիռը կազմել է 44.06% (աղյուսակ.13): «Visa» և «Master Card» միջազգային քարտային


համակարգերի քարտերի տեսակարար կշիռը տրամադրված քարտերում կազմել է համապատասխանաբար՝ 36.51% և 10.51%, իսկ մնացած մասը՝ 8.9% կազմել են միջազգային այլ քարտային համակարգերի քարտերի տեսակարար կշիռը, որտեղ ընդգրկված են նաև HSBC debit քարտերը:

Նշված քարտային համակարգերից յուրաքանչյուրի ներքո առևտրային բանկերի կողմից տրամադրվում են նաև միայն անկանխիկ գործառնություններ իրականացնելու նպատակով որոշակի առևտրի կետերի համար նախատեսված կամ առևտրի կետի հետ համատեղ թողարկված առևտրային քարտեր:

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող/սպասարկվող քարտերի տեսակները					
Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր*
Հայբիզնես բանկ	+	+			
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+			
Ամերիաբանկ	+	+	+		
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
«ԲՏԱ» բանկ	+	+			
Զարգացման բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+		+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
«Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ	+	+			
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	+		+		
Արցախբանկ	+	+			
Կասկադ Բանկ	+	+			
Առէկսիմբանկ		+	+	+	
Յունիբանկ	+		+		
Արդշինինվեստբանկ	+	+	+		
Պրոկրեդիտբանկ			+		

* - այդ թվում՝ Diners Club, HSBC debit քարտեր

գրաֆիկ 7



2008թ ընթացքում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 326371 մլն. ՀՀ դրամի 6586134 գործառնություն: Քարտային գործառնությունների ծավալը 2007թ. համեմատ աճել է 52.8% (112737 մլն. ՀՀ դրամով), իսկ գործառնությունների քանակը աճել է 48.7% (2157584 գործառնությունով): Ընդ որում 2008թ. ընթացքում քարտերի սպասարկման սարքավորումների միջոցով՝ վճարային քարտերով իրականացվել է 25893 մլն. ՀՀ դրամի 720978 անկանխիկ գործառնություն, այդ թվում ԱԳՄ-ների միջոցով իրականացված անկանխիկ գործառնությունների ծավալը կազմել է 3206 մլն. ՀՀ դրամ: Իրականացված անկանխիկ գործառնությունները կազմել են քարտային գործառնությունների ծավալի 8% և քանակի 11%:

2008թ ընթացքում քարտապանների կողմից ինտերնետ միջավայրում իրականացվել է 2297 մլն ՀՀ դրամի 148738 գործառնություն: Այդ թվում՝ ինտերնետ միջավայրում իրականացվող էլեկտրոնային առևտրում ընդգրկված առևտրի կետերի միջոցով հաշվետու

ժամանակահատվածում իրականացվել է մոտ 912 մլն. ՀՀ դրամի 134112 գործառնություն, և 1385 մլն ՀՀ դրամի քարտից-քարտ փոխանցումներ, քանակը կազմել է 14626:

2008թ ընթացքում ՀՀ տարածքում իրականացված քարտային գործառնությունների ծավալի 75.35%-ը (246 մլրդ ՀՀ դրամ) և քանակի 82.98%-ը (5464992 գործառնություն) իրականացվել է ԱԳՄ-ների միջոցով, ՊՈՍ տերմինալների/իմպրինտերների միջոցով իրականացվել է գործառնությունների ծավալի 24.07% (78570 մլն ՀՀ դրամ) և քանակի՝ 15.74%-ը (1036742 գործառնություն): 2007թ. համեմատ ԱԳՄ-ներով կատարված գործառնությունների ծավալը ավելացել է՝ 59.23%-ով (91474 մլն ՀՀ դրամով), իսկ ՊՈՍ տերմինալներով/իմպրինտերներով գործառնությունների ծավալը ավելացել է՝ 32.91%-ով (19481 մլն ՀՀ դրամով): Քարտային գործառնությունների քանակը ԱԳՄ-ներով կատարված գործառնություններում աճել է՝ 51.32%-ով (1853426) և ՊՈՍ տերմինալներով/իմպրինտերներով կատարված գործառնություններում 27.17%-ով (221973): /աղյուսակ 12/:


2008թ ընթացքում քարտերով իրականացված գործառնությունների ծավալում «ԱրՔա» քարտերի միջոցով իրականացվել է 2915892 գործառնություն մոտ 117550 մլն. ՀՀ դրամ ծավալով, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 57% (47662 մլն. ՀՀ դրամով): «ԱրՔա» քարտերով իրականացված գործառնությունները կազմել են քարտերով ընդհանուր գործառնությունների ծավալի 36.02% և քանակի 44.27%:

Քարտերով իրականացված գործառնությունների ծավալում գերակշռող մասնաբաժին ունեն Visa միջազգային քարտերով իրականացված գործառնությունները՝ 38.95% (քանակում՝ 31.75%): «Visa» և «Master Card» միջազգային քարտերով իրականացվել է համապատասխանաբար 127129 մլն. ՀՀ դրամ և 39164 մլն. ՀՀ դրամ ծավալով գործառնություն, որոնց քանակը կազմել է համապատասխանաբար 2090858 և 653957: 2007թ. համեմատ «Visa» միջազգային քարտերով իրականացված գործառնությունների ծավալը ավելացել է 40.9%-ով (քանակը 45.6%-ով), իսկ «Master Card» միջազգային քարտերով իրականացված գործառնությունների ծավալը ավելացել է 69.8%-ով (իսկ քանակը աճել է՝ 104%-ով):

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 925427 գործառնություն 42528 մլն ՀՀ դրամ ծավալով, որը 2007թ. համեմատ ավելացել է 48.7%-ով ծավալում և 56.4%-ով քանակում:

2008թ ընթացքում ՀՀ տարածքում քարտերով իրականացված միջին օրական գործառնությունների ծավալը կազմել է 907 մլն ՀՀ դրամ, իսկ միջին օրական գործառնությունների քանակը կազմել է 18295: 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ միջին օրական գործառնությունների քանակը ավելացել է 48.7%-ով (5993-ով), իսկ ծավալը ավելացել է 52.8%-ով (313 մլն ՀՀ դրամով):


Հաշվետու ժամանակահատվածում շրջանառության մեջ գտնվող մեկ «ԱրՔա» քարտով շարունակվել է ամսական իրականացվել միջինում 1.3 գործառնություն, իսկ մեկ գործառնության միջին ծավալը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 3 հազար ՀՀ դրամով և կազմել է 53 հազար ՀՀ դրամ:



	2007թ				2008թ				III/ 2008թ				IV/2008թ			
Ընդամենը ԱԳՄ-ներ	338				538				479				538			
Պլաստիկ քարտերի տեսակներ	«ԱրԱ» քարտեր	VISA	MASTER CARD	Միջազգային այլ քարտեր**	«ԱրԱ» քարտեր	VISA	MASTER CARD	Միջազգային այլ քարտեր **	«ԱրԱ» քարտեր	VISA	MASTER CARD	Միջազգային այլ քարտեր **	«ԱրԱ» քարտեր	VISA	MASTER CARD	Միջազգային այլ քարտեր**
Ըստ քարտերի սպասարկման տեսակների՝ քարտեր սպասարկող ԱԳՄ-ներ	259	214	140	36	468	337	312	43	415	287	194	42	468	337	312	43
Մեկ ԱԳՄ-ին ընկնող սպասարկման քարտերի քանակը	550	651	169	623	428	492	153	942	475	550	193	868	428	492	153	942

Մեկ ԱԳՄ-ով կատարված գործարքների միջին ամսեկան ծավալը (մլն. ՀՀ դրամ)	18	23	7	64	16	22	6	81	19	28	12	92	23	29	8	100
Մեկ ԱԳՄ-ով կատարված գործարքների միջին ամսեկան քանակը	541	449	112	1 360	428	436	94	1 776	501	543	184	1 964	539	530	145	2 109
ԱԳՄ-ով մեկ քարտով կատարված միջին ամսեկան գործառնությունների ծավալը (մլն. ՀՀ դրամ)	0.033	0.035	0.042	0.103	0.038	0.045	0.037	0.086	0.040	0.050	0.060	0.106	0.053	0.058	0.055	0.106
ԱԳՄ-ով մեկ քարտով կատարված միջին ամսեկան գործառնությունների քանակը	0.98	0.69	0.66	2.18	1.00	0.88	0.61	1.89	1.06	0.99	0.95	2.26	1.26	1.08	0.95	2.24
Տրամադրված/շրջա նառվող քարտեր *	142 482	139 280	23 665	22 425	200 190	165 894	47 769	40 504	196 957	157 867	37 524	36 441	200 190	165 894	47 769	40 504
ԱԳՄ-ով գործառնությունների ծավալը (մլն. ՀՀ դրամ)	56 770	58 172	11 903	27 593	90 649	90 409	21 400	41 721	23 486	23 868	6 730	11 560	32 053	28 819	7 872	12 904
ԱԳՄ-ով գործառնությունների քանակը	1 682 344	1 153 866	187 938	587 418	2 405 161	1 761 482	352 201	916 469	624 064	467 644	107 360	247 450	756 218	536 293	135 696	272 084
ԱԳՄ-ով օրական գործառնությունների քանակը	6 572	4 507	734	2 295	9 395	6 881	1 376	3 580	9 751	7 307	1 678	3 866	11 816	8 380	2 120	4 251
ԱԳՄ-ով կատարված մեկ գործառության միջին ծավալը (մլն. ՀՀ դրամ)	0.034	0.050	0.063	0.047	0.038	0.051	0.061	0.046	0.038	0.051	0.063	0.047	0.042	0.054	0.058	0.047
* -տրամադրված քարտերը բերվում են ամողական կարգով																

գրաֆիկ 8



7. Միջազգային դրամական փոխանցումների համակարգեր

Ֆիզիկական անձանց փոխանցումները առանց բանկային հաշվի բացման իրականացվում են՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը առանց բանկային հաշիվների բացման հաճախորդների դրամական փոխանցումները իրականացնելու նպատակով անդամակցում են՝ MONEY GRAM, ANELIK, UNISTREAM, CONTACT և այլ համակարգերում: Ընդհանուր առմամբ, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը անդամակցում են դրամական փոխանցումների իրականացման 17 միջազգային համակարգերում:

2008թ ընթացքում վերոհիշյալ համակարգերով կատարված փոխանցումները, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունից դեպի դուրս կատարված փոխանցումների ընդհանուր ծավալը 2007թ. համեմատ նվազել է 1.1% (423 մլն ՀՀ դրամով) կազմելով 38945 մլն. ՀՀ դրամ, իսկ քանակը աճել է 8.8% կազմելով 88778: Դեպի Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները ընդհանուր


ծավալում ավելացել է՝ 13.9% (ստացումների ընդհանուր ծավալը կազմել է 439499 մլն. ՀՀ դրամ), և քանակը 7.14% (ստացումների ընդհանուր քանակը կազմել է 1636683), որտեղ մեկ փոխանցման ծավալը ավելացել է 16 հազ դրամով և կազմել ՝ 269 հազ ՀՀ դրամ: Նշված համակարգերով փոխանցումները հիմնականում կատարվում են ֆիզիկական անձանց միջև: Ընդ որում մի շարք վճարային համակարգեր կիրառում են խրախուսման տարբեր միջոցներ, այդ համակարգերի միջոցով դեպի Հայաստանի Հանրապետություն փոխանցվող գումարները շահառուին ՀՀ դրամով վճարելու դեպքում: Ինչպես նաև ռաջարկում են ստացված միջոցները անմիջապես շահառուի անունով բացվող բանկային հաշվի վրա փոխանցման բարենպաստ պայմաններ:

Հաշվետու ժամանակահատվածում դեպի Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները ծավալային մասով 11.29 անգամ և քանակային մասով 18.44 անգամ գերակշռում են Հայաստանի Հանրապետությունից դեպի դուրս կատարված փոխանցումներին: Հաշվետու ժամանակահատվածում MONEY GRAM, ANELIK, UNISTREAM, BISTRAYA POCHTA, և այլ համակարգերով ստացումներում գերակշռում են UNISTREAM համակարգով փոխանցումները՝ 51.78% ծավալում և քանակում 40.93%: Առանձնանում են նաև CONTACT և ANELIK համակարգերով ստացումները, որոնք կազմել են համապատասխանաբար 8.77% և 9.58% ծավալում (քանակում 14.23% և 10.58%) /աղյուսակ 15/: BISTRAYA POCHTA համակարգով ստացումների մասնաբաժինը կազմում է 5.72% ծավալում (քանակում 5.77%): Հաշվետու ժամանակահատվածում MIGOM, MONEY GRAM և այլ համակարգերով փոխանցումները դեպի Հայաստանի Հանրապետություն կազմել են ընդհանուր փոխանցումների ծավալի մոտ 25.6% (քանակում՝ 31.43%):


2008թ վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված 5 միայն դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություններ (ոչ բանկ կազմակերպություններ): Նշված կազմակերպությունները հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 6.8 մլրդ ՀՀ դրամի վճարում (որը նվազել է 24.8%-ով), այդ թվում 3.5 մլրդ ՀՀ դրամի վճարումը կատարվել է միջազգային դրամական փոխանցումների իրականացման համակարգերին անդամակցելու միջոցով. իսկ արտասահման կատարվել է 0.4 մլրդ ՀՀ դրամի փոխանցում:

Առանց բանկային հաշիվների բացման, դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմում են՝ դեպի արտասահման փոխանցումները կազմել են 0.1% իսկ արտասահմանից ստացումները 0.8%: Այս կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում՝ հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 188 հազ. դրամ: Ընդ որում դրամական փոխանցումների իրականացման համակարգերին անդամակցելու միջոցով, այն կազմում է 100 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ գրեթե պահպանել է նույն մակարդակը

գրաֆիկ 9



գրաֆիկ 10



Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով (SWIFT-ի, Տելեքսի, ֆաքսի միջոցով) Հայաստանի Հանրապետություն կատարված ընդհանուր փոխանցումները 2008թ. ընթացքում կազմել են՝ ծավալը՝ 2295 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 467 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 232999 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 9.8 մլն ՀՀ դրամ. նախորդ տարվա համեմատ ավելացել է 3.5 մլն ՀՀ դրամով : /աղյուսակ 16/:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները ավելացել են մոտ 52 մլրդ դրամով և կազմել են մոտ 255 մլրդ դրամ. մեկ վճարման միջինը ավելացել է 222 հազ. դրամով և կազմել 2.38 մլն դրամ: Միաժամանակ բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումները դեպի արտասահման աճել են 0.4 մլրդ դրամով և կազմել 303 մլրդ դրամ: Որի արդյունքում առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներում դիտարկվում է դրամական միջոցների զուտ արտահոսք՝ 49 մլրդ դրամ ծավալով, որը 2007թ. նկատմամբ նվազել է մոտ 2-անգամ:

Ընդհանուր առմամբ առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները 2007թ. համեմատ ավելացել են 17%-ով և կազմել 701 մլրդ դրամ, իսկ դեպի արտասահման կատարված փոխանցումների ծավալը՝ պահպանել է նույն մակարդակը և կազմել՝ 343 մլրդ դրամ:

8. Ինքնասպասարկման տերմինալներով մատուցվող ծառայություններ

2008թ վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված 6 կազմակերպություններ, որոնք ստացել են դրամական (փողային) փոխանցումների իրականացման և միաժամանակ վճարային գործիքների պրոցեսինգի և քլիրինգի իրականացման լիցենզիաներ: Վերջիններս մատուցում են նոր տեսակի ծառայություն՝ ինքնասպասարկման տերմինալների միջոցով կանխիկ եղանակով տարբեր տեսակի (հիմնականում կոմունալ և կապի ծառայությունների դիմաց) վճարումների ընդունում: Նշված վճարահաշվարկային կազմակերպությունները ինքնասպասարկման տերմինալներով հավաքագրում են բնակչությանը մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարները մոտ 16 կազմակերպությունների համար: 2008թ ընթացքում տեղադրվել են 357 ինքնասպասարկման տերմինալներ, որոնց քանակը կազմել է 553: Հաշվետու ժամանակահատվածում այս տերմինալներով իրականացվել է 2779 մլն դրամի (879403 գործառնություններ) միջոցների հավաքագրում, որի ծավալը ավելացել է 8.9-անգամ:

Միաժամանակ որոշ վճարահաշվարկային կազմակերպություններ պրոցեսինգային, քլիրինգային ծառայություններ են մատուցում 3 առևտրային բանկերի: Մասնավորապես նշված առևտրային բանկերը համագործակցելով վճարահաշվարկային կազմակերպությունների

հետ իրականացրել են կոմունալ ծառայությունների դիմաց միջոցների հավաքագրում՝ 34 մլն դրամ ծավալով 6667 գործառնություն, որոնց հետ կապված պրոցեսինգը իրականացվել է վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից:

9. Նոր բանկային տեխնոլոգիաներ

ՀՀ տարածքում գործող որոշ առևտրային բանկերի կողմից հաճախորդներին մատուցվում են ծառայություններ բանկային հեռահար սպասարկման համակարգերի (PC banking, Internet- banking, Telebanking՝ mobile phone, Home-banking) միջոցով: Այս համակարգերը հաճախորդներին թույլ են տալիս ստանալ տեղեկատվություն իրենց հաշվի վիճակի մասին, այլ նաև իրականացնել իրենց հաշվի կառավարում ներկայացնելով բանկին հանձնարարականներ:

2008թ ընթացքում բանկային հեռահար սպասարկման համակարգերի միջոցով հաճախորդների կողմից նախաձեռնված վճարումների ծավալը կազմել է 856081 մլն. ՀՀ դրամ (քանակը 561266): 2007թ. համեմատ այս եղանակով նախաձեռնված վճարումների ծավալը ավելացել են 2.3%-ով, իսկ քանակը ավելացել են 19.3%-ով: Հաճախորդների կողմից հեռահար սպասարկման համակարգերի միջոցով ներկայացված հանձնարարականով մեկ վճարման միջինը նվազել է 14.2%-ով և կազմել 1.5 մլն. ՀՀ դրամ: Այս համակարգերով իրականացված մեկ վճարման մեծությունը թույլ է տալիս պնդել, որ այս համակարգերից հիմնականում օգտվում են տնտեսավարող սուբյեկտները:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից տեղադրվում են նաև արտարժույթի ավտոմատ փոխանակման տերմինալներ, ինչպես նաև աշխատանքներ են տարվում այդ ծառայությունը ԱԳՄ-ների միջոցով մատուցման ուղղությամբ:

10. Նշումներ

(1) - Նյութը մշակված է ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող «Հաճախորդների, նրանց հաշիվների, կատարված փոխանցումների, մատուցված վճարային ծառայությունների և վճարային գործիքների վերաբերյալ» (Ձև թիվ 20) հաշվետվության, վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների, ինչպես նաև կենտրոնական բանկի որոշ տվյալների հիման վրա:

(2) – Ներկայացված նյութում ընդգրկվել են 2008թ ընթացքում գործող առևտրային բանկերի տվյալները:

(3) - 2002թ. հունվարից փոփոխվել է ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից ներկայացվող (Ձև թիվ 20) հաշվետվության լրացման կարգը, մասնավորապես՝ հաշվետվության մեջ չեն ընդգրկվում առևտրային բանկի ներբանկային փոխանցումները, բացառությամբ վերջիններիս հաճախորդների միջև իրականացված փոխանցումների:

(4) - Միջին օրեկան տվյալների հաշվարկը կատարվել է ըստ աշխատանքային օրերի (եռամսյակի համար՝ 64 օր, տարեկան 4*64 օր):